ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՐԹԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱՑ ԸՄԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱՄՍԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՐԱՐԱՏ

Տարեկան 3 ռ., կիսամեայ 1 ռ. 50 կ.

Ամսագիր 1 անգամ։

Ամսագրի գինն է 10 որդեկ, կէս տարեկանը 5 ռուբլի։

Յայտարարութեանց համար երեսի վրայ տողը 10 կոպեկ։

Ձրի օրինակներ չեն բաժանուիր։

Խմբագրութիւնը բնակւում է Ս. Էջմիածնում։

Ամսագրի գրութիւնները ուղղել Ս. Էջմիածին, Արարատ ամսագրի խմբագրութեան։

Ամսագրի գրութիւնները ընդունում է Ս. Էջմիածնի Տպագրութեան Տեղակալ Տ. Գաբրիէլ Վարդապետ Ալեքսանդրեան։

Ամսագրի գրութիւնները ընդունում է Ս. Էջմիածնի Տպագրութեան Տեղակալ Տ. Գաբրիէլ Վարդապետ Ալեքսանդրեան։

ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՐԹԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

№ 45 ՏԱՍՆԵՒԵՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 45

1897 ՄԱՐՏԻ 23 (5 Մայ.) ՀԱՐԲԱՍԱՒԱԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

— ԱՄՍԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ —

Ամսագրի առաջին տարուայ մէջ մենք ուզում ենք խօսել մեր հայրենեաց եկեղեցական հարցի մասին, որ ներկայ ժամանակներում ամենից աւելի ուշադրութեան է արժանի։ Ամենքս էլ գիտենք, որ մեր եկեղեցին ունի իր ներքին կազմակերպութիւնը, որ նրա գլուխն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ նրան ենթակայ են Վեհարանի Տեղապահը, Ս. Էջմիածնի Միաբանութիւնը, Ս. Գայանէի, Ս. Հռիփսիմէի, Ս. Գրիգորի վանքերի միաբանութիւնները, Ս. Յակոբայ Երուսաղէմի, Ս. Թարգմանչաց Կ. Պոլսի, Ս. Խաչի Ագուլիսի, Ս. Աստուածածնի Ղրիմի, Ս. Գէորգի Թիֆլիսի, Ս. Աստուածածնի Ռշտունեաց, Ս. Աստուածածնի Ջուղայի, Ս. Աստուածածնի Ամիդայ, Ս. Աստուածածնի Ալաշկերտի, Ս. Աստուածածնի Ուրմիայի, Ս. Աստուածածնի Ախալքալաքի, Ս. Աստուածածնի Ղարսի, Ս. Աստուածածնի Ղարաբաղի, Ս. Աստուածածնի Ղրիմ

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

Ծրագրաւորուած է Փարիզում հրատարակել ֆրանսերէն «Nouveste Nachrichten» լուսաբերը, որ պիտի ունենայ իր թղթակիցները Լոնդոնում, Պեռլինում, Վիեննայում, Ռուսիոյ մայրաքաղաքում և ուրիշ կարեւոր կեդրոններում։ Նոր լրագրի խմբագրութիւնը յանձնուած է Ֆրանսիոյ հայ գաղթականութեան ամենաեռանդուն անդամներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ֆրանսիոյ Ազգային ժողովի անդամ Ժ. Ֆերրի, որ Ֆրանսիոյ արտաքին գործոց նախարարութեան ժամանակ մեծ համակրութիւն էր ցոյց տուել հայերուն, այժմ ուղեւորուած է Ռուսիա։ Ֆերրի կ՚երթայ Ռուսիոյ հարաւային նաւահանգիստները, ուր կան հայ գաղթականներ։ Ան կ՚ուզէ տեղեկանալ անոնց կացութեան մասին։

Ֆերրի Ռուսիոյ մէջ պիտի հանդիպի նաեւ Ֆրանսիոյ Ազգային ժողովի անդամ Ժ. Ռամբոյի հետ, որ Ռուսիոյ մէջ կը գտնուի Ռամբոյի հրատարակած մեծ աշխատութեան համար նիւթեր հաւաքելու նպատակով։

Ֆրանսիոյ Ազգային ժողովի անդամ Ժ. Ռամբոյ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Հետևում է վերջը)

ԴՈՒՔ ՀՈՒՐՈՂԴՈՒԽ

22 ի մայիսի 1897 ք.

Ընթերցող։

Ներողություն եմ խնդրում ձեզանից, որ ձեզ եմ դիմում այս անսովոր ձևով, բայց ես ստիպված եմ այդ անել, որովհետև ուզում եմ ձեզ հետ խոսել ոչ թե որպես գրքի հեղինակ, այլ որպես մի մարդ, որ ձեզ հետ նույն հողի վրա է ապրում, նույն օդն է շնչում, նույն ցավերն ու նեղությունները կրում, նույն ուրախություններն ու հաճույքներն ունենում։ Ես ուզում եմ ձեզ հետ խոսել այն մասին, որ ինձ ստիպեց գրել այդ գիրքը, և այն մասին, թե ինչ եմ ես ուզում ասել այդ գրքով։

Ես ինձ համարում եմ ռուս գրող, ռուս հասարակության անդամ, ռուս ժողովրդի զավակ։ Ես ռուսերեն եմ գրում, ռուսերեն եմ մտածում, ռուսերեն եմ երազում։ Ես ռուս եմ ինձ զգում, ռուս եմ ուզում լինել, ռուս եմ ուզում մնալ։ Ես ռուս ժողովրդի հանդեպ ունեմ այն զգացմունքները, որ ունեն ռուս գրողները, ռուս հասարակության անդամները, ռուս ժողովրդի զավակները

ատ էր հալածուել իրրև քիւրդի և նրա կրօնի թշնամին։ Ջատախցիները Տիգրիսի մէկ ճիւղի չատ նեղ և խորունկ հովիտի մէջ և Ջաքիրի հօրեղբօր պաշտպանութեան ներքև կըշարունակէին իրենց ճամբորդութիւնը երբ Ջաքիր իւր մարդկով անոնց վրայ հասաւ։ Հարցուց հայերուն, թէ ուր կերթան։ Նրբ իմացաւ հայերու նպատակը՝ յայտնեց թէ ինքն ալ կընկերանայ իրենց, վասնզի նոյն տեղը երթալու մտադիր է։ Ճատախցիք մի քիչ կասկածեցան՝ բայց տեղական կառավարութեան յանձնարարութեամբ՝ Ջաքիրի հօրեղբայրը իրենց կ'առաջնորդէր։ Իսկ Ջաքիրի չորստական լեզուն քիչ դիւթիչ չէր։ Նորա ծրագիրը չուտով պատրաստուեցաւ։ Ճանապարհը այնչափ նեղ էր, որ չէր կարելի երկու մարդ քովի գնային։

Ջաքիրի հօրեղբայրը ամենու առջեւէն կերթար. անոր ետևից կըգնար հրսկայ, գեղադէմ Աբրիկը հեծած։ Ջաքիր կամաց կամաց յաջողցուց, որ իւրաքանչիւր հայու ետև մի քիւրդ անցնի։ Իսկ ինքը Աբրիկի ետևն անցաւ։ Բոլորն ալ հեծեալ էին, բացի վերջին մարդէն՝ որ մի խեղճ հայ էր։ Ճարմար տեղն հասնելուն պէս Ջաքիր կրակեց իւր հրացանը Աբրիկի կռնակին և հայհոյելով գոչեց՝ «ես սպանեցի Հայաստանի Լօրիս Մելիքովը»։ Նոյն միջոցին կրակ ըրին իւր միւս մարդերն և 6 չատախցիները գրեթէ միանագամ իրենց ձիերէն և ջորիներէն գետին փռուեցան։

Այս սէրազործութեամբ Ջաքիր լիացուց իւր գրպանները ոսկիով և աձնելով չատախցիներու ջորիները և ձիերը գնաց իւր տուն և մի քիչ կասկածով սպասեց ելքին, մինչև Վարդի փաշան նորա ճակտին դրոշմեց մի տաք համբոյր, և այն օրէն ի վեր Ջաքիր ուխտեալ թշնամի էր հայոց և մանաւանդ Ջատախին, զոր վերջապէս Վանի կոտորածից յետոյ աւերակ դարձուց։ Այս դէպքէն յետոյ Ջաքիր կանանաւորապէս սկսաւ իւր սպանութեանց և կողոպտութեանց գործը, օր ըստ օրէ ընդարձակելով անոր սահմանը և բազմացնելով իւր հրամանի ներքև գտնուողներու թիւը։ Ջաքիր Ջատախից իւր ուշադրութիւնը դարձուց Հայոցձորի ունևոր և հայաշատ գաւառը։

Այդ երկու տեղերն էին վայրերը, ուր նա սակէպ կը յաճախէր բռնի ցաբեհն, ոչխար, ոտակ ու ուրիշ ընծայներ տարուէ տարի առնելու։ Սակայն անկէ զերծ չէր նաև Ռշտունեաց գաւառը, Նօրդուզը և Հոգւոց վանքը, և մինչէ Ազթամարայ կաթողիկոսարանը կարող էր գէթ այս վերջին սպանութիւններէն առաջ, անուշ մեղրախորհուրդ չկերցնելով անոր՝ նոյն իսկ Խաչատուր կաթուղիկոսի ներկայութեան և վհեարանի մէջ, երբ Ջաքիրը պարզ կը կըյայտարարէր, թէ ինքը միայն այն ժամանակ կըգադարի իւր գործերէն, երբ կառավարութիւնը իւր կողմից և կամ կաթողիկոսի միջնորդութեամբ 7 կամ 8 ոսկի բերող մի պաշտօն կըտայ իրան։ Սակայն վերջը միայն հայու կողոպտութով և արիւնով գոհ էր։

Իրերը այս դրութեամբ չարունակուեցան մինչև ընդհանուր կոտորածի ժամանակ՝ այն է 95-ի աշնան, երբ Վանի շրջակայ գիւղերի և գաւառների կոտորածը և կողոպուտը սկսաւ։ Այն ժամանակ Ջաքիրը սպանեց մի քանի հայեր հայոցձորի մէջ և այդ գաւառի բազմաթիւ գիւղերէն տալու ահագին քանակութեամբ կողոպուտ և հազարաւոր ոչխարներ։ Նա ասով չգոհացաւ։ Ամբողջովին կողոպտեց նաև հարուստ Հոգւոցվանքը, որ չատ մը գրաւչիներու համար հօրէ ցորդի մի հանգստատեղի և ձրի պանդոկ էր եղած և որ խիստ յարձակ Ջաքիրին, իւր հօրը և բարեկամաց խորհրդովով և իւղեղէններով հիւրասիրած էր։ Նա տարաւ այդ վանքի ոչխարները, արջառները և դոյքերը, բոլոր օրթոդոքս անօթները և զգեստեղէնները։ Տարաւ նաև լման 400 խաչ։ Նա տաճարի վարագոյրը իւր վրանի համար իրրև վարագոյր գործածեց, իսկ նորբ և գեղանկար սփռոցները իւր՝ և կնոջ պիղծ մարմիններուն համար չափիկ չինեց։

Եկաւ Վանի կոտորածի տխուր ժամանակը։ Ջաքիր եկաւ Վան և իւր մարդերով մասնակցեցաւ կոտորածին. յետոյ գնաց այրից և կողոպտից Վանից քիչ հեռու Կուռապաշ գիւղը, ապա տուրբ Խաչ վանքը, յետոյ Ջուշանց գիւղը, և վերջապէս Կարմրուրայ և Վարագայ վանքերը և ապա գնաց իւր գառնութեան առաջին և վերջին գաւառը Թափեց Ջատախի վրայ՝ ուր սպանեց 80 անձի չափ և անտի անցաւ աւերելու անոր շրջակայ գիւղերը։ Ժամանակ մը գնաց Փերպատական իւր տարածները մարսելու, իւր ոչխարները ոսկիի վերածելու։

Մինչև վերջերս այդ գործովն էր զբաղուած։ Անցեալները ներման արժանանալով՝ Վան եկաւ և սարսափեցուց խեղճ հայ ազգաբնակութիւնը։ Այժմ նորէն իւր գիւղն է գնացել։ Ցեսնենք, թէ ինչ կըսպասէ մեր գլխուն։ Դարձեալ մեծ վախի և դողի մէջ ենք։

***

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻՆ ԸՆԹՑԱՐՈՒՐԹԻՒՆ

—

Ձեր թերթում տպել էք իմ մի նամակը, չնչելով նրանից այն բոլորը, ինչ որ չէք կամեցել։ Բացի դրանից, որովհետև վախները փակուած է՝ ասելով կամենում էք յայտնել թէ այլ ևս չէք սրպելու իմ նամակը, ուստի կարդացէք այս «Արձագանքի» մէջ, որի հիւրասիրութիւնից օգտվում եմ։

Աշխատում էիք ցոյց տալ, որ ես Տ. Նազարեանի հետ ձեռք ձեռքի եմ տուել— դրա մէջ սուտ ելաք։ Այժմ էլ ձեր թերթի խմբագիրը, որ Հրատ. Ընկեր. Վարչութեան նախագահն է, բերում է ձեղ միմիայն խեղաթիւրումներ և սուր ընկերութիւնից (ինչպէս արել է նաև պ. Ծոլհ. Թումանեանցի առիթով) և դուք այդ սուտերի վրայ հիմնուած, ինձ ստախօս էք յայտարարում։

Կարդացէք ուրեմն այստեղ թէ ով է ստախօսը։

Հրատ. Ընկերութիւնը, նորից կըրկնում եմ, ինձ փող է տուել այն ժամանակ միայն, երբ աշխատութիւնս գրաքննիչից եկել է և տպարան գնացել։ իսկ ինձնից փողի ստացականը առել են յունվար 29-ին։ Իմ սխալս միայն նրանումն է եղել, որ ես ստացական տուել եմ փողը ստանալուց առաջ, երբէք չըմտածելով, որ վարչութեան պ. նախագահը կարող է օգտուել ապագայում իմ այդ վստահութիւնից։ Բայց գլխաւորը այն է, որ ես փողը ստացել եմ միմիայն այն ժամանակ, երբ գործը գրաքննիչից ստացուել է և երբ ինձ ոչ մի օրէնք չէ ցոյց տուած նախօրօք, որի զօրութեամբ ես փողը պիտի ստանայի գիրքը լոյս տեսնելուց միայն յետոյ։ Նրբ պատուէրը կատարուած է, մանաւանդ հաւանութիւն գտած և վճռուած տպագրելու—այդ ժամանակ տրուած գինը ոչ թէ աւանս է կոչվում, այլ վարձատրութիւն։

Սրանով էլ փակվում է միայն այս հարցը և ցոյց տալիս թէ որպիսի խնդրիգաներով է զբաղուած «Մշակը», այլ և որպիսի լրբութեամբ գիտէ ժաքրել իրեն՝ միմիայն ուրիշին կեղտոտելու ճգնելով։ Զզուելի չէ այդ բոլորը։

Ինձ մնում է մի վերջին խօսք ևս ասել «Մշակին» և այլևս մատդիր չեմ գծուած ինտրիգներով զբաղուել։

Ինչու համար է որ իմ նամակից հանել է իրան ուղղուած հետևեալ խօսքերը. «Այս ապացոյցը բաւական է հասկացնել տալու որ դուք սխալուել էք ձեր զէնքերի ընտրութեան մէջ։ Գէթ ուրիշը և համարձակ ապացուցէք, եթէ կարող էք, որ ես ո՛րեւէ գաւաճանութիւն գործել եմ գրական մաքրութեան դէմ»։

Ինչու է որ չեն տպել այդ հրաւէրը։ Գարզ՞էք արդեօք որ այդ ինտրիգանները զգացել են թէ ոչինչ չեն կարողանալու պատասխանել, ամաչել են և հրաւէրն էլ լոյս չեն ընծայել։

Բայց ես միանգամ ընդ միշտ վճռում եմ հաշիւս այդ պարոնների հետ, կրկնելով որ նրանք չատ չնչինացել են, չատ գծուծ դրութեան հասցրել «Մշակին», այն «Մշակին», որի գլխաւոր աշխատակիցներից մէկն էլ ես եմ եղել և որից այժմ ցաւօք սրտի ամաչած եմ բոլորովին հրես դարձնել՝ չկամենալով Գր. Արծրունու պարտած դրոշը ցեխոտացնելուն մասնակցել։

Վ. Փափազեանց։

17-ն ապրիլի 1897 թ.
Թիֆլիզ։

ՉԱՆԱՉԱՆ

Հանճարն ու խելագարութիւնը.— Բուդապէշից գրում են «Frankf. Zeit.»-ին.— Մի ժամանակ իւր երկար ճանապարհորդութեան միջոցին ամբողջ Եւրոպային զարմացնող հրաշալի-մանուկն ու թեւաւորը՝ Մօրից Ֆրանկլ՝ այժմ գտնվում է յիմարանոցում, ուր նրա նոյնութիւնը ասպիկանութեան միջոցով հաստատուեցաւ խիստ տարօրինակ կերպով։

Ֆրանկլը վերջին ժամանակներս անապատն թափառեց աշխարհիս երեսին, Նեապոլում գեց ամիս առաջ ինքնասպանութեան մի փորձ արաւ նա ազատուեցաւ, վերադարձաւ Հունգարիա, վերջապէս եկաւ Բուդապէշ և մուրալ սկսեց փողոցներում։ Ոստիկանութիւնը այդ մարդուն կալանաւորեց երէկ։ Նրան ուղղուած բոլոր հարցերին նա տալիս էր հետևեալ անփոփոխ պատասխանը—ինքը քաղցրիկ Աստուածն է, որ բարիներին օգնութեան է հասնում։ Խելագարին տարան Էնգելհարդի յիմարանոցը, որ իւր գործերը ըստ մեծի մասին միայն անբուժելիների առջև է քաց անում։

Բժիշկները չունք էին անում ձեռք բերել որևէ մի փաստ հաստատելու հիւանդի ճիշտ ով լինելը։ Սակայն նա ամեն հարցին միակերպ պատասխանում էր թէ ինքն Աստուած է։ Վերջապէս, նրա ըմբռնելու կարողութիւնն իմանալու համար, առաջարկեցին նրան քաւաքանական մի քանի հարցեր, որոնց արագ ու ստոյգ պատասխանները բժիշկներին ապշեցրին։ Նոյնպէս կարուկ պատասխանում էր նա աստղերի շարժման վրայ եղած հարցերին, և, երբ նրա պատասխաններից մէկը համաձայն չեկաւ Ֆլամարիոն աստղաբաշխի առաջ բերած թուին, հիւանդը ժպտալով ասաց.—ես սխալուած չեմ կարող լինել։ Երկար և դժուարին հաշուից յետոյ բժիշկները վերջապէս գտան, որ Ֆլամարիոնի գրքում իսկապէս սպրդել է մի տպագրական սխալ, և թէ հիւանդն իրաւունք ունի։ Խելագարի լուսանկարը ուղարկուեցաւ ոստիկանութեան, որ վերջապէս հաստատեց խելագարի նոյնութիւնը Մօրից Ֆրանկլի հետ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐԳՈՒՐ ԲՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Գուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՑԵՎԱ-ՐՈՒԴՆԵՒ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՑՆՑ.—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ.—6½—7½ ժ.

Հիւանդասենեակում քիմիական և խոշորացուցական հետազոտութիւն են անում մկան, թռչուն, արեան, կաթի հայթն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վիրաբուժուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ· ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Մշտական մահճակալների բաժնով
ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈՍՈՎԻ
(ՆԱԻԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՆՏՆԿՈՑ)
Սօլօլակի, Դանիելեանց փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈՍՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւններին։

Ֆ. Վ. ՀՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. Ղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին-բժիշկ ԵՒ. Կ. ԿԱՐՊՈՎԻՉ, ժամը 10—11, ծանկաբուծական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵՆՑ, ժամը 12—1, մանկաբուծական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԵՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԴԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիոլոգիական հետազոտութիւններ է կատարում — հետազոտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի հայթն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մասնաւոր և ոչ մասնաւոր։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծագկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասնաւոր, մշտական մահճակալի, ելեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը յայտնում է իւր գիտութիւն Ընկերութեան անդամների որ տարեկան 27-ին, կիւրակէ, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիզի Դումայի դահլիճում, նշանակուած է արտակարգ ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկանները լինելու են.—

1) Քննութիւն և հաստատութիւն Բաթումի ճիւղի 1897 թ. նախահաշուի և Ախալցխայի ճիւղի 1897 թ. յաւելուածական նախահաշուի։

2) Ընտրութիւն խորհրդի մի անդամի և երկու փոխանդամի—

3) Քննութիւն ընկերութեան 16 անդամների յայտարարութեան, որով խնդրում են բեկանել մարտի 2-ին և 16-ին կայացած ընդհանուր ժողովների որոշումները իրրև ապօրէն և խորհրդի զեկուցումը ու կարծիքը նրա մասին։

Ընկերութեան անդամները հրաւիրվում են վերանորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով խորհրդի գրասենեակը, Սերգիևսկի փողոց, № 16 (3—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՕՐ“
Բարձրագոյն Հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՌՈՒԲԼԻ ԲԱՑԻ ՊԱՀԱՍՊՅԱՑ ԴՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամեն տեսակ չարժական և անչարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ծովային, գետային և ցամաքային, այլ և ապահովագրութեան նաւերի։

ԿԵՆԴԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլխի, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձից ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող գրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում է ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վելիամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

(100—4)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1897 թուի մայիսի 18-ին կը կայանայ Թիֆլիզի քաղաքային խորհրդի 1897—1901 քառամեայ շրջանի ձայնատուրների ընտրութիւնը։ Ժողովի տեղի և ժամի մասին առանձնապէս կըյայտարարէ քաղաքագլխի պ. պաշտօնակատարը։ Սկսած ապրիլի 18-ից մինչև մայիսի 2-ը քաղաքային վարչութեան տան մէջ զբաղմունք եղած օրերում և ժամերում ընտրողներից ընդունվում են իրաւասութեան համար նրանց առաջարկած կանդիդատների ցուցակները, միևնոյն ժամանակ ընտրողներին տոմսակներ է տրվում ընտրութեանց ներկայ լինելու համար մայիսի 18-ի ժողովին և գալտնի քուէարկութեամբ իրաւասութիւն ընտրելու։ Միևնոյն ժամանակի ընթացքում քաղաքագլխի պ. պաշտօնակատարի անունով ընդունվում են այն անձանց գրաւոր յայտարարութիւնները, որոնք կըցանկանան իրանք իրանց առաջարկել իրաւասութեան։ Ընտրողներից ցանկացողները կարող են Քաղաքային Վարչութեան դիւանից ստանալ 1892 թուականի օրէնսդրութեան 24—23 յօդուածներից քաղուածներ, կանոններ և հրահանգներ ընտրութեանց վերաբերմամբ և թերթիկներ իրաւասութեան առաջարկուած անձինքների անունները գրելու համար։ Ամեն մի ընտրողի առաջարկած կանդիդատների թիւը 96-ից աւելի չպիտի լինի, իսկ եթէ պատահէ որ մէկն ու մէկը որոշել թուից աւելի լինի առաջարկած, այն ժամանակ հաշուելիս ի նկատի կառնուին միայն առաջին 96-ը։ Կանդիդատների ցուցակների ընդունելութիւնը կըդադարի մայիսի 2-ին ցերեկուան ժամը 3-ին, որից յետոյ կնքուած արկղը կըբացուի Քաղաքային Վարչութեան նիստում և վերջինս կսկսի կազմել իրաւասութեան առաջարկուած բոլոր կանդիդատների ընդհանուր ցուցակը, որոնցով իւրաքանչիւր կանդիդատի ստացած ձայների թիւը։ Հինգ ընտրողներից աւելի պակաս տոկոսով առաջարկուած անձինքները չեն մացնուիլ կանդիդատների ցուցակի մէջ, բացի նրանցից, որոնք իրանք իրանց կ'առաջարկեն։

Հաւատարմագրեր կարող են տրուել այնպիսի անձինքների, որոնց մասին ցոյց է տրուած քաղաքային օրէնսդրութեան 24-րդ յօդուածի 2 ծանօթութեան և 25—27 րդ յօդուածների մէջ, 1) այն անձինքների, որոնք ընտրութեանց մասնակցելու իրաւունք ունին և որ չեն գտնվում խնամակալութեան տակ, թէ և չեն հասած 25 տարեկան հասակի, 2) իգական սեռին պատկանողները, 3) հայրերը իրանց անբաժան որդիներին։ Իսկ 1892 թուականի քաղաքային կանոնադրութեամբ սահմանուած չէ բացակայ ընտրողի ձայնի իրաւունքը մի ուրիշին տալ, ուստի և այդպիսի հաւատարմագրեր չեն կարող տրուել։ (3—1)

ԽԱՉԱՏՈՒՐ Ա.ԲՈՎԵԱՆԻ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ստացել է և վաճառվում է Թիֆլիզ «Կենտրոնական գրավաճառանոցում» հեղինակի որբացած թոռների օգտին։

Գիրքը տպուած է մեծ խնամքով, մաքուր թղթի վրայ, 540 մեծ ութածալ երեսներից, արժէ 1 ռ., ճանապարհի ծախքով և 1 ռ, 35 կոպ.։ Ճանապարհորդների համար պատրաստուած է հասնուած և չքեղ կազմիրով, 40 կ. և 1 ռուբ.։ Քաղաքից դուրս ուղարկվում է և փոստային վճարով՝ եթէ արժէքի կէսը կանխիկ է ուղարկուած։ (20—11)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
31-ն Փետրվարի 1897 թ.

ԳԱՆԱՁՔ			ԳԱՐՏՔ		
I Դրամարկղ	109,911	11	I Հիմնական դրամագլուխ	1,147,190	—
II Ընթացիկ հաշիւ Պետական բանկային բ.	309,108	62	II Պահեստի դրամագլուխ	218,304	88
III Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.	3,213,512	06	III Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար	14,271	33
IV Զեղջ. տոկ. թղ. կտրոնների և այլն	14,651	16	IV Դրամական աւանդներ		
V Զեղջումն սօլօ—մուրհակների գրաւականով			ա) Ընթացիկ հաշուով հասարակ.	708,813 58	
ա) պետութեան ոչ ապահովեալ արժեթղ.	209,237 —		բ) « » պայմանաւոր.	468,135 63	
բ) ապրանքների	35,300 —		2) Պայմանաժամով՝		
գ) անչարժ կալուածքների	110,710 —	355,247 —	ա) Ընկերութեան անդամներից.	303,145 —	
VI Փոխառութիւն գրաւականով			բ) Օտար անձինքներից.	1,834,606 80	
ա) Պետութեան ապահ. տոկ. թղթ.	387,860 —		3) ցպահանջ		
բ) » ոչ » » »	47,635 —		ա. Ընկերութեան անդամներից.	9,102 —	
գ) ապրանքների	— —		բ) Օտար անձինքներից.	354,732 96	3,678,535 97
դ) ոսկւոյ և արծաթի	— —	435,495 —	V Պետ. բանկ. զեղջ. մուրհակներ		390,669 60
VII Առանձնական ընթացիկ հաշիւներ	— —	1,077,460 14	VI Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով		— —
VIII Պահեստի դրամագլխին պատկ. տոկ. թղթեր		212,332 46	արժեթղթերով		— —
IX Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր		23,248 83	VII Ընկեր. փոխադրութեամբ ստացած հասանելի դումարներ.		115,068 57
X Թղթակիցներ՝			VIII Թղթակիցներ		
ա) Նոցա հաշիւը (Loro)	142,023 51		ա) Նոցա հաշիւը (Loro)	26,528 23	
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	607,545 11	749,568 62	բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	602,764,37	629,292 60
XI Բողոքուած մուրհակներ		3,050 —	IX 2 վճարուած դիվիդենդ		11,087 87
XII Պայմանաժամ. անցուցած փոխառ.		— —	X 2 վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների.		57,523 82
XIII Մուրհակի և գրոշմակիր թղթեր		2,889 80	XI Փոխանցիկ դումարներ		34,025 94
XIV Ընթացիկ ծախսեր		7,695 48	XII Հանումներ ըստ 16-րդ յօդ. սրամադր.		38,815 32
XV Յետ ստացուելիք ծախսեր		7,966 93	XIII Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		76,991 76
XVI Կահ-կարասիք և սկզբն. ծախսեր		3,587 82	XIV 5% պետական հարկ դրամագլխներից		21 47
XVII Ընկերութեան վրայ մնացած անչարժ կալք		23,842 34	XV Զուտ արդիւնք 1896		150,189 98
XVIII Փոխանցիկ դումարներ		21,421 74			
	Բ. Ա.	6,561,989 11		Բ. Ա.	6,561,989 11

Дозволено цензурою, Тифлисъ 22-го Апрѣля 1897 года.

Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.